

ՊԱՏՄԱ-ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Անհատներ որպես բնակավայր հայտնի էլ պետև ըրոնդե դարից Այն կիմեր ցեղի անունով անվանվել է Կումայրի, իսկ հետագայում հնչյունափոխվելով դարձել է Գյումրի։ Այդ բնակավայրի մասին հիշատակություն ունի Քսենոֆոնը՝ Ակադեմիկոս Ն. Մանանդյանը աղագրություն է, որ Քսենոֆոնի հիշատակած Գյումրիստ քաղաքը Կումայրին՝ է։

Կումայրի անվամբ բնակավայրը հիշատակվում է VII—VIII դարերի պատմոր աղբյուրներում՝ Անտիոն Ներսիսյանի «Աշխարհացոյց»-ում (VII դ.), Ղևոնդի՝ «Պատմություն» մեջ (VIII դ.) և այլն¹։

Այնուհետև Կումայրի տեղանունը երկար մասնակի չի հիշատակվում։ Այդ անունը չկա նույն-իսկ Սիմեոն կաթողիկոսի 1765 թ. կողմում «Ջամբուրում», որ Ջրուլի, Աղին, Ղիշախ, Մարմաշեն, Մառտարտ և այլ գյուղանունների կողքին նման և ոչ մի անուն չի հիշատակվում²։

Այդպես «Ներսիսյան» նշում է, որ XIX դարի սկզբում այդ բնակավայրում եղել է հին բերդ, որի մարտկոցներից մեկում կտր անհայտ թվականով

արարագիր տապանաքար, որ նշան է տեղի կարևորություն, և որ թուրքերը այդ վայրը կոչում էին Գյումրի։ Ուրեմն VIII դարի 70-ական թթ. հետո մինչև 1837 թ. քաղաքի Ալեքսանդրապոլ անվանվելը, մոտ 1065 ամրիների բնակացքում էլ տեղի է ունեցել բնակավայրի անվան հնչյունափոխությունը։ Կումայրին կոչվել է նաև Գիմրի, Գումրի, Գյումրի, Գումրի ձևերով³։

Կումայրի բնակավայրը միջնադարում դանվել է այժմ «Ջերբեղի ձոր» («Ջարբղի ձոր») կոչվող վայրում։ XIX դարի սկզբներին Գյումրին եղել է մի փոքրիկ գյուղ, որի բնակիչները գոյնազան հալածանքներից աղաքվելու համար «Ջերբեղի ձոր» վայրից աստիճանաբար բարձրացել են բլրի վրա,

¹ Ն. Ղևոնդ, Վ. Մ. Ալիշան, Շիրակ, Տեղագրություն պատկերացոյց, Վենետիկ, ս. Ղազար, 1881, էջ 154։

² Կումայրի անվան ազավագման վերաբերյալ շատ ենթադրություններ են եղել, սակայն հավաստի կարելի է համարել Ներսիսյանի մասնակցից մեկի ռազմական ռազմի 1854 թ. ապրիլի 20-ի գրառումներում կարդում ենք, որ Ալեքսանդրապոլը, որ եղել է իրենց կորպուսը, թուրքերն անվանում են Գումրի, որ նշանակում է մաքսատուն (թուրքերեն gümrük մաքսատուն—Վ. Ա.), որպիսին այստեղ եղել է (Воспоминания, т. XI, СПб, 1860, II отд., Походный дневник, 1854—1855 гг., стр. 483—484)։

Հայտնի է, որ Կումայրին, շատ հնուց, իր գիրքով ունեցել է թե՛ ռազմական և թե՛ առևտրական նշանակություն։ Այստեղ են խաչաձևով զեպի հարավ՝ Ջուլֆա, արեմուտը՝ Արաքս և Եփրատ գետերի ափերները, Հյուսիս՝ Կոխիդա և զեպի արևելք՝ Կուր գետի հովիտները աանող ճանապարհները։ Նկատի ունենալով այս, թուրքերը պետք է որ սահմանադիտին ունենային, և, ինչպես նշվում է, ունեին ամրոց, որ եղել է նաև մարտատունը։ Թուրքերը, արմատական Կումայրի անվանը հարմարեցնելով իրենց մարտաան նշանակությանը արտահայտվող անդի Գումրի անվանումը, այդպիսով ազավաղել են ինչ տեղանունը, Թուրքերն ընդհանրապես աշխատել են իմաստավորված ազավաղել ինչպես ուրիշների, այնպես էլ հայկական տեղանունները (ղետերի, լեռների տեղանուններ), ինչպես որիսի, Արաքսի՝ Ալադաղ և այլն։

¹ Քսենոֆոն, «Անտրասիո», թարգմ. Ն. Մանանդյանի, տե՛ս Բնական տեսություն հայ մոզովյի պատմության, Կ. Ա., Երևան, 1944, էջ 393։ Տե՛ս նաև Ա. Ա. Мартиросян, Армения и эпоху бронзы и раннего железа, Ереван 1961։

² Ն. Մանանդյան, Հին Հայաստանի և Անգրիկոկոսի մի րանի պրոբլեմների մասին, Երևան, 1944, էջ 16—17, Հին-նականի պատմության մասին ան՛ս նաև՝ Ն. Մանանդյան, Քննական տեսություն հայ մոզովյի պատմության, Կ. Ա., 1944, էջ 64, Կ. Կոզմովան, Հինիսական, Երևան, 1957, էջ 7, Լ. Կ. Կոլեկով, Սովետական Հայաստան, Երևան, 1967, էջ 216։

³ Տե՛ս Ս. Ս. Ներսիսյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 61։ Տե՛ս նաև «Պատմություն Ղևոնդի մեծի վարդապետի հայտը», Ս. Պետրոսյան, 1887, էջ 137—138։

⁴ Սիմեոն Ներսիսյան, Ջամբու, Վաղարշապատ, 1872, էջ 387, 391, 392 և այլն։

որը հետագայում դարձել է քաղաքի «Գեղացոց» թաղը (մահլան)։ Այստեղից էլ ցած, ավելի ուշ, առաջանում է «Ձորի մահլան» կամ «Ձորի բողաղը»՝ քաղաքի հիմնական թաղամասերից մեկը։

Պատմում են, որ Գյումրի գյուղը XIX դարի սկզբներին դառնում է «Չերքեզի ձորից» դեպի հյուսիս-արևելք և ունեցել է մի հին եկեղեցի։ Այդ-տեղ ապրելիս է եղել մոտ 30 տուն պարսիկ և 20 տուն պարսկահայազապահ հայ, որոնք տեղավորվել են առանձին թաղերում և ապրել հաշտ՝ Կարնո գաղթականները պատմել են, որ իրենց այստեղ գալու օրերին նույն ձորի գլխին, մի հարթ տեղում դառնում էր մոտ 100 տնից բաղկացած Գյումրին ու սև քարով շինված մի հին եկեղեցի։ Ավելի ուշ, ամրոցի կառուցումից հետո, գյուղն աստիճանաբար տեղափոխվում է ավելի վեր, քաղաքի հյուսիս-արևելյան կողմը, ձորի ափերը, իսկ նախկին եկեղեցին քանդակվում, արգեն 1857 թ. կառուցում են ս. Նշան եկեղեցին⁷։

Գյումրի գյուղի բնակչությունը ղբաղվել է երկրագործությամբ (ռանչարներ) և անասնապահությամբ։ Եղել են միայն հատուկենտ գյուղական արհեստավորներ՝ բրուա, նալբանդ, Նույն-իսկ այն ժամանակ, երբ արգեն գյուղը տարածվել է ու առաջացել է նաև «Ձորի բողաղը», ժողովուրդը շարունակել է իր հին զբաղմունքը։ Այդ է պատճառը. որ բլրի վրայի թաղը հետագայում կոչվել է «Գեղացոց մահլա», իսկ «Ձորի բողաղը» նաև՝ «Ռանչարներ մահլա»։ Այս երկու թաղերի տները հաղորդակցվել են ակնատների միջոցով, որոնցից օգտվել են նաև վաճառի գեպքում ու այլ նպատակներով⁸։

Հին Գյումրիի տները կառուցվել են հում աղյուսից. քարից են եղել միայն եկեղեցին ու գերեզմանաքարերը։ Գյումրեցիների բարբառը պատկանել է Շիրակի խոսվածքի «ում» ճյուղին, խոսել են առանց «և»-ի («գ»-ի)՝ Վերջինս Կարնո բարբառի աղբյուրությունն է⁹։

1801 թ. ռուս կողակալին առաջին իմբերի Գյումրի մտնելու ժամանակ գյուղի շրջակայքը ամայի է եղել։ Այսպեղ կոզակային կայազորի ղինվորների համար, Գյումրի գյուղից ոչ հեռու, գրեթե նրան կից, կառուցվել է բնակելի թաղամաս (1804

թ.)։ Շուտով այստեղ ստեղծվում է բավական ամրացված սահմանային կայան, իսկ 1817 թ., ռուս մի անգլիացի ճանապարհորդի հավաստման, նըշված վայրում եղել է ռուսական բավականին մի մեծ կայազոր¹⁰։

Որպես հուսալի անկյուն, դեպի Գյումրի են սկսում զալ ապահով վայր փնտրող հայ ընտանիքներ։ Սակայն այս գաղթականները հիմնականում մոտ շրջաններից էին, որոնք մեծ մասամբ երկրագործներ լինելով, այստեղ շարունակում են զբաղվել նույն գործով ու առանձին փոփոխություն չեն մտցրնում կենցաղում։ Նրանք բնակություն են հաստատում «Ձորի մահլայում», որը գնալով մեծանում է։ Աճում է գյուղական արհեստների պահանջը, կառուցվում են ձիթհաններ, դինվորական շինարարական աշխատանքներին մասնակցելու են գալիս նաև շրջակա գյուղերի գյուղացիներն ու արհեստավորները՝ որմնագիրներ, քարտաշներ, ատաղձագործներ և այլն։

Գյումրիի տնտեսական կյանքը աշխուժանալ սկսեց միայն 1826—28 թթ. ռուս-պարսկական և 1828—29 թթ. ռուս-թուրքական պատերազմներից հետո, երբ գաղթականները մեծ հոսանքով կկան այստեղ։

Պատերազմից հետո հայտնի պարծում, որ ռուս զորքերի կողմից զրավված զգալի տարածքներ պետք է նորից վերադարձվեն պարսկական և թուրքական իշխանություններին։ Ռուս զորքին մեծ աջակցություն ցույց տված հայ ազգաբնակչությունը, որը միալու էր վերադարձվող տերիտորիաներում, կմատնվեր պարսիկների և թուրքերի վրեժխնդրությանը, ուստի առաջացավ հայերին այդ վայրերից գաղթեցնելու հարցը։

Գաղթի թույլատվությունից անմիջապես հետո (1829 թ.) ստեղծվեցին այն կազմակերպող հանձնաժողովներ, սկսվեց մեծ գաղթը։ Հիմնականում երեք խումբ կազմած՝ էրզրումցիներ, կարսեցիներ, բայազետցիներ, գաղթականները տարածվում են Արևելյան Հայաստանի տարբեր վայրերում։ 1830 թ. Կալենո դավառից գաղթած 7898 ընտանիքից 6000-ը հասաատվում է Ախալցխայում։ Սրանք հիմնականում Կարինի քաղաքացիներ էին, մեծ մասամբ տրհեստավորներ, որոնք Ախալցխայում հիմնեցին նոր քաղաքամասը։ Շնորհիվ այս գաղ-

⁷ ՊԻԱ, գործ 103 (115), Մ. Թամրազյանի նյութերը, տեղը 1։

⁸ ՊԻԱ, գործ 103 (115), Ն. Նիկողոսյանի նյութերը, հե-րածություն։

⁹ ՀԱԻԱ, հեղինակի հավաքած նյութերը։

¹⁰ ՀԱԻԱ, Կ. Խորգոթյանի հաղորդած նյութերը։

¹¹ X. Փ. Բ. Մուս, Армения. Пугеные очерки и топы, Тифлис, 1910, стр. 162; «Военно-статистическое описание Российской империи», т. XVI, ч. VI, Эриванская губерния, Сиб., 1853, стр. 257; Սովետական Հայաստան, Երևան, 1967, էջ 216։

թականների, Ախալցխան դարձավ Կովկասի ար-
հեստագործական խոշոր կենտրոններից մեկը՝
Դաղթականներ ևն պալիս նաև Արդաշանից, Մու-
շից, Ախալքերտից և այլն։ Երանց մեջ կային հայ
կաթողիկներ, հուներ, հայ քաջաներ և այլազգիներ։
Դաղթականների ընդհանուր թիվը մոտ 90 հազար
էր, որոնք տարբեր ժամանակ դալով՝ ապրածվե-
ցին Ախալցխայում, Ախալքալաքում և շրջակայ-
քում, մի մասն էլ հետագայում հաստատվեց Գյում-
րիում։ Հայ կաթողիկների մի մասը հաստատվեց
Ախալցխայի և Ախալքալաքի շրջաններում, իսկ
մյուս մասը դնաց Լոսի, Նիրակ, նաև՝ Գյումրի
կարսի հույների մի մասը հաստատվում է Պալկա-
յում, մյուս մասը, ավելի ուշ, դնում է Գյումրի
կարսից ցածր ընտրեցին Գյումրին, Արագածի
լանջերը, Ապարանը, Բալինը և այլազանքները
դնացին մասամբ Գյումրի, իսկ մեծ մասը՝ Սեանս
լճի կողմերը, Սաղկաձոր (Դարաշիլակ), Սուրմա-
լու՝ Դաղթականների մի մասն էլ դնաց Փամբակ
մի խումբ էլ՝ Թիֆլիս, որի մի մասը հետագայում
եկավ Գյումրի և Փամբակ՝ Դաղթականների մեծ
կալին հայապարններ, արհեստավորներ, տնտես-
կաններ։

Գյումրի շարժվող գաղթականների առաջին
խմբերը Ախալքալաքի անցնելով, սկզբում վրաններ
ևն խմբում գետի տփին, իսկ հետո հաստատվում
են Գյումրիում։ Դաղթի կաղմակերպող հոռիներ
վերաբերում էին գաղթականներին օժանդակելու,
տեղաբաշխելու, որոշ արտոնություններ տալու և
այլ հարցերի Գյումրից կարևոր են համարում
առանձնացնել մի քանիսը Դաղթականների քրիս-
տոնական նոր պաշտոնը շվար և խոտը լինեն
մահակակուն բնակիչների հետ, այլ կաղմեն
տուններն պատաններ կամ թողել, որ նրանք
աները կառուցեն ուղիղ շարքով, «երեք ոտմեն լայ-
նություն» փողոցներ թողնեն, որ տները լինեն
հաստատուն և հարմարություններով օժանդակ, որ
գաղթականներին բնակեցնեն կլիմայական տեսա-
կետից համապատասխան վայրերում, պաղպաղ-
ների և քաղաքացիների համապատասխանաբար
տեղափոխեն պաղպաղում և քաղաքներում, որ ամեն
մի նոր պաղպաղ տեղություն հաշվին շինեն մի
օրինակելի տուն իր բոլոր հարմարություններով,

եղնելով տեղի տնտեսական պայաններից և
այլն¹²։

Սգտվելով ռուսական կառավարության տված
որոշ արտոնություններից և նախապորոքուն-
ներից, դաղթականները Գյումրիում սկսեցին տներ
կառուցել։ Աստիճանաբար առաջանում էին մեծ
կառավարություն Գյումրի սկզբին այստեղ բնակու-
թյուն հաստատած ռուս զինվորները հաստատել
էին իրենց թաղը, որը գտնվում էր քաղաքի հարա-
վային մասում և կոչվեց «Սլաբոսկա», 40—50
տուն մահակականներ Գյումրիի հարավ-արևել-
քում իմենցին իրենց թաղը՝ «Թուրքի մահլեն»,
դրանից վերև, դեպի հյուսիս, 150 տուն հույներ
Իմենցին իրենց թաղը՝ «Ումանոց» կամ «Հունաց
մահլան», 50 տուն հայ կաթողիկներ դրանց մո-
տեքում «Ֆանանցների մահլեն» հաստատեցին,
Հունաց թաղից հյուսիս խղճուկ տներ շինեցին աղ-
քառ դաղթականները, որոնց թաղը «Հողակալան»
էր կոչվում, իսկ 30—40 տուն հայ քոչանների թաղը՝
«Բոշի մահլան», Հին գյումրեցիներն էլ բերդի կա-
ղակցությունը լիովին տեղահանվում և բնակու-
թյուն ևն հաստատում «Ջորի մահլան»¹³։ Քաղաքի
կենտրոնական մասում գեղեցիկ տներ էին շինում
Կարինից, Բայազետից, Կարսից և այլ տեղերից
կաթ ունեղները։ Սրանք առաջնաարար իրենց
ձևերն ևն վերցնում առևտուրը, հողերը, շինարա-
րական պատվերները, արտադրական ձևնարկու-
թյունները և այլն։ Քաղաքի շինարարությունը կա-
ռավարվել է պլանի համաձայն 1836 թ. կառավարվել
է քաղաքի առաջին հասակագծումը։ Այն ունեցել
է քաղաքային առևտրի կրկանքով ու լայնքով իրար
հասող ուղիղ փողոցներով։

Գյումրիի մեծանալու հետ մեկտեղ մեծանում
էր նաև նրա քաղաքական-տնտեսական նշանակու-
թյունը։ Հարավային ռազմանաղխին գրաված իր
ռազմական դիրքով՝ այն կարևոր նշանակություն է
ուսանում ինչպես ռազմական, այնպես էլ անա-
ստական տնտեսական։ Արաղ թափով շարունակվում
և 1836 թ. ավարտվում է բերդի կառուցումը։ Այս-
տեղից էր անցնում զինավոր փոստային ճանա-
ղարհը՝ Նրևան—Գյումրի—Ախալքալաք—Ախալ-
ցխա։ Այստեղով էր ետև հաստատվում ինչպես
Քուլախիսի և Փոթիի, այնպես էլ Բուրժումի կերճով
Թիֆլիսի հետ¹⁴։ Բերդի կառուցման ավարտի ուղի-
քով 1837 թ. հոկտեմբերի 3-ին Ախալցխա—Ախալ-

¹² Կ. Ղափաղաշյան, Մի փոստաբուլի Ախալցխայի հա-
յերի կենդանի վերաբերյալ, Բն., 1967, № 3, էջ 165։

¹³ Ա. Լեիդեանց, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և
կովկասի Հայեր, 19-րդ դ., մաս Ա, Թիֆլիս, 1894, էջ 411։

¹⁴ Պ. Լ., Պ. Լ., Պ. Լ., 103, և. Նիկողոսյանի նյութերը, տես 1,
գլ. 2։

¹⁵ Ա. Լեիդեանց, Նյւ. աշխ., էջ 325։

¹⁶ Պ. Լ., Պ. Լ., Պ. Լ., 103, և. Նիկողոսյանի նյութերը, տես 1,
գլ. 2։

¹⁷ Բ. Հակոբյան, Երևանի պատմությունը (1801—1879),
Երևան, 1959, էջ 124։

քաղաք ճանապարհով Գյումրի է ժամանում Նիկողայ I կայսրը, որը քաղաքը դիտելուց հետո շարունակում է ճանապարհը դեպի Երևան: Այդ կտպակցությունը, սկսած 1837 թ., նշված ճանապարհը կոչվում է Քաղաքավորական ճանապարհ¹⁸, որն, էլ ավելի ուշ, իր ուղղական ու անտեսական նշանակություն համարվեցավորում է¹⁹:

Գյումրի ժամանելով, կայսրը դիտում է բերդը, հիմք է դնում բերդում կառուցվելիք սբ. Ալեքսանդրայի անունը կրող ուսական եկեղեցուն, և Ալեքսանդրա Ֆեոդորովնա կայսրուհու անվամբ Գյումրին վերանվանվում է Ալեքսանդրապոլ քաղաք¹⁹: Տեղի հմուտ վտրպետների ձեռքով կառուցված վերահիշյալ ամրությունն ունի յոթ բաստիոն, ղորանոցներ, ուղեվիկներ, երեք մուռք՝ Ախալցխայի, Թիֆլիսի և Երևանի, կամուրջներ, ղանաղան շենքեր, դարձնոց-արհեստանոց: Սև և կարմիր տուֆի համադրությամբ դեղեցիկ պատերով այդ ամրությունը քաղաքին տալիս էր ուրույն տեսք: Քաղաքի մեծացումը, ղինվորական նպատակներով կառուցումները այսպեղ էին բեռում քաղաքացիների, դյուղացիների, արհեստավորների, հատկապես շինարար արհեստավորների ուղադրությունը: Իսկ եթե ավելացնենք նաև աղի և շրջապատի բազմաթիվ դյուղերի պահանջների ավելացումը, ապա հասկանալի է դառնում քաղաքի արագ զարգացման և արհեստավորական քաղաք դառնալու պատճառները: Սկզբնական շրջանում աստիճանարար այսպեղ հավաքվելով, արհեստավորները արտադրում էին միայն աղական պահանջները նկատի ունենալով: Մեծացող քաղաքը դեռ իր էությունը մնում էր գյուղական և կրում էր այդ կարգի հարկեր ու պարահանք: Դա բնորոշ է եղել ոչ միայն Ալեքսանդրապոլին, այլև Պարսկաստանի ու Անդրկովկասի շատ քաղաքների²⁰. քաղաք հայաարարվելուց հետո էլ Ալեքսանդրապոլը Երևանի նահանգի քաղաքների թիվը մտավ հիմնականում որպես բերդաքաղաք²¹: Որ Ալեքսանդրապոլը 1837 թ. եղել է միայն նոր, լավ ամրություններով քաղաք, երևում է Ն. Ա. Նեֆեդևի ճանապարհորդական հուշագրություններից²²: Ալեք-Պոլը որպես երկրորդ կարգի բերդաքաղաք մնացել է մինչև 1840 թ. և միայն Վիրա-Իմերեթյան նահանգը կաղմվելուց հետո, որպես նրա տասնմեկ

գավառներից մեկի կենտրոն, անցել է քաղաքների շարքը²³: Ասկտյն թի որքանով էր նա այդ ժամանակ իրականում քաղաք. կարելի է եղրակացնել քարտաշ Օհաննեսի պատկերավոր խոսքերից. «Պիճի քաղաքում էր Գյումրին, քաղաքներու մեջ, գեղ, գեղերու մեջ՝ քաղաք: Տները, օր շարված էին նեղ ու թոզոտ փողոցների բոլորը, մե հարկանի էին, սև քարից շինած»²⁴:

Քաղաքի նման բնույթն էր պատճառը, որ մինչև 1840 թ. աղական, պետական և ոստիկանական մարմինները Ալեքսանդրապոլի ընկալությունը հարկադրում էին թե՛ որպես քաղաքացիների և թե՛ որպես դյուղացիների: Այս բանը խիստ խանդարում էր քաղաքի զարգացմանը և հատկապես արհեստավորական համաքրությունների կաղմակերպմանը: Կայսեր այցելության առթիվ, աղբալցիները 1837 թ. դեկտեմբերին իրենց ղրությունը թեթևացնելու մասին խնդրագիր են ուղարկում նրան: Խնդրագիրն իր նշանակությունն ունենում է²⁵. որոշ հարկեր կրճատվում են: Քաղաքային կյանքն ավելի է աշխուժանում: Մինչ այդ եղած փոքրաթիվ արհեստավորները շեն կարողանում արդեն բավարարել օրեցօր աճող պահանջները: Արհեստավորների պահանջ նկատելով, Արևմտյան Հայաստանի լավագույն արհեստավորները ասորեր վայրերից գիմում են Ալեքսանդրապոլ և հաստատվում այստեղ: 1839 թ. մի մեծ խումբ կարինցի հայ ու ալաղզի բնտանիքներ են գալիս Ալեքսանդրապոլ: Սրանք ներկայացրել են մոտ 100 արհեստ ու ղրաղմունք²⁶: Այս արհեստավորները եղել են ձեռներեց մարդիկ և շուտով սկսել են մեծ ղարկ տալ արհեստներին: Նրանք այստեղ հիմնել են արհեստի մինչև այդ տեղում չեղած ղյուղեր, ղարգացրել են արհեստները, բացել են քարհանքներ, մեծ աղեցություն են ունեցել լեղվի և մշակույթի վրա²⁷, Դեռ մինչև Ալեքսանդրապոլ գալը, կարինցի արհեստավորներն ու աղետրականները ղգալի ղրական աղեցություն էին ունեցել այն վայրերում, ուր նրանք հիմնաղրվել էին 1830 թ. սկսած: Ինչպես նշում է պրոֆ. Կ. Ղաֆա-

¹⁸ Նշվ. աշխ., էջ 125:

¹⁹ Ա. Նեֆեդև, Նշվ. աշխ., մաս 2, էջ 434:

²⁰ Շ. Ա. Егзааров, Նշվ. աշխ., էջ 253—266:

²¹ Ք. Հակոբյան, Նշվ. աշխ., էջ 373:

²² Взгляд на Армянскую область. На путевых записках П. Нефедьева, СПб., 1839, стр. 3.

²³ Ք. Հակոբյան, Նշվ. աշխ., էջ 377—381:

²⁴ «Երևան», 1960, 23-րդ նոյեմբերի, № 277:

²⁵ Շ. Ա. Егзааров, Նշվ. աշխ., էջ 253:

²⁶ Վ. Արաղանյան, Հայ համաքրությունները Անդրկովկասի քաղաքներում (18—20-րդ դ. սկիղրը), Երևան, 1971 թ.: Նոր աշխատության մեղ բերվում են ստույղ փաստաթղթեր ու նոր աղյայներ, որոնց համաղայն XIX դարի II կեսին Ալեքսանդրապոլում որոշակիորեն եղել են 96 արհեստ ու ղրաղմունք, էջ 58—59:

²⁷ ՀԱԽԱ, հեղինակի հաղարած նյութեր:

դարյանը, Ախալցխայում շուտով «հասարակական կանգնի գեղը (գյուղացի, եկեղեցի, արհեստակցական կազմակերպություններ, բաղաձային վարչություն, տնտեսություն և այլն) ամբողջովին անցավ եկվոր (կտրինցի)»-ի. Ա.) հայերի ձեռքը, և տեղացիները համակերպվեցին նրանց հետ, աստիճանաբար բնությունը նրանց լեզուն, սովորությունները, գլխավոր, տուն կառուցելու ձևերը և այլն»²⁸։ Ախալցխայից և այլ վայրերից Ալեքսանդրապոլ գաղթած կտրինցիները այսպիսի նույնպես որոշակի ազդեցություն են ունենում տեղի կենցաղի վրա։ Եվ դա դարձանալի չէ։ Արևմտյան Հայաստանի ամենամարդաշատ քաղաք հանդիսացող Կարինը, ուր 1800—1830 թթ. հաշվվել է մոտ 135 հազար բնակիչ, եղել է նաև ասիական սուլթանի ու արհեստագործության խոշոր կենտրոններից մեկը։ Նկատի ունենալով, որ Արևմտյան Հայաստանի, Փոքր Ասիայի հայաբնակ վայրերի արհեստագործությունը և տնտեսությունը հիմնականում հայերի ու հույների ձեռքում էին, իսկ Կարինում միայն հայերը այդ շրջանում հաշվվել են 31 հազար, մանավանդ եթե նկատի ունենանք Կարինի այդ խավի առաջավոր դերը ոչ չէր կրել արհեստավորների համար սրբաբանականները ստեղծողի, կոմսները մշակողի, Լանաֆուկան իրավունքներ ու պարտականություններ սահմանողի²⁹, այդուհանդերձ է, որ մասնաշաղկապները հետո, որտեղ էլ որ նրանք հիմնվեին, պետք է զգալի ազդեցություն ունենային, և, ինչպես վերը ասվեց, ունեցան ինչ Ախալցխայում, ինչ Ալեքսանդրապոլում և ինչ այլուր Կարինցի հայ, հույն և այլազգի արհեստավորների տոհմերին միացել էին նաև Արևմտյան Հայաստանի զանազան արհեստավորական կենտրոններից գաղթած արհեստավորներ, տնտերականներ, ինչպես նաև նման զբաղմունքի տեր մարդիկ Անդրկովկասից և այլ վայրերից։

Ալեք-Պոլի դարդացման համար նպաստավոր պայման հանդիսացավ նրա գաղութային կենտրոն դառնալը (1810 թ.), Առևտրական ճանապարհի վրա գտնվելուց բացի, որն իր մի հատվածով համընկնում էր «սպի ճանապարհին», այն նաև հացուստ շրջանի կենտրոնն էր, որտեղից հացահատիկ էր մատակարարում ճանապարհի երկու կողմերի ուղղությամբ։ Երևանից այս ճանապարհով Ալեք-Պոլ էին ուղարկում զինի, զրի, ձմերուկ, սևի,

զանազան մրգեր և այլն։ Իսկ այստեղից Երևան հացահատիկ, կոշիկ, աղ, Ալեք-Պոլից գյուղատնտեսական մթերքներ էին տարվում զեպի վրաստան, այնտեղից Ալեք-Պոլ էին բերվում մեծ քանակությամբ շինարարական։ Ալեք-Պոլը դարձավ այն կենտրոն, որը պետք է մատակարարեր շրջակա մեծ թվով գյուղերին և նույնիսկ նահանգի կենտրոն Երևանին։ Հետո գտնվելով պետության առևտրական կենտրոններից և հաղորդակցության ճանապարհներից, Երևանը վերածվել էր որոշ չափով ինքնուրույն, արհեստներով անգույն նշանակություն ունեցող, բնակչության նեղ սահմանները բավարարող քաղաք։ Ընդհանրապես այդ ժամանակ անդրկովկասյան շատ նահանգական քաղաքներում արհեստավորական արտադրությունը թույլ էր զարգացած և բավարարում էր լիարժեք տեղական անհրաժեշտ սպանքները։ Այդ անսովորական ռազմական էին կազմում միայն Ալեքսանդրապոլի ու Ախալցխայի Մշտուպես կրկնվող պատերազմների հետևանքով արհեստավորությունից զրկված թուրքական վիլայեթներն իրենց անհրաժեշտ սպանքները ստանում էին Ալեքսանդրապոլից և Ախալցխայից։ Արհեստավորական արտադրության մեծ սահմանը արհեստավորությունը մղեց բնակչության տեղական արտադրությունը։ Քաղաքական, տնտեսական տեսակետից աստիճանաբար զգալի նշանակություն ստանալով, սկսած 1816 թ. մինչև 1871 թ. և նրանից հետո էլ վարչատերիտորիալ վերաբաժանումների մոմանակ, քաղաքը երկրորդական դասից և կենտրոնից առաջնորդ դարձավ և Երևանի նահանգի տնտեսական նշանակությամբ զերազմացում է նույնիսկ նահանգի կենտրոն Երևանին։ 1846 թ. Ալեքսանդրապոլում կար արդեն 16337 բնակիչ, որի մոտ 5 ասիսը կազմում էին այլազգիներ՝ ռուսներ, հույներ, թուրքեր, հրեաներ³⁰։

XIX դ. երկրորդ կեսին արհեստագործությամբ Ալեք-Պոլը ավելի զարգացած էր, քան Երևանը։ Հակաբյանը նշելով Երևանի նահանգի առևտրականների, արհեստավորների, բանվորների, տղերգործների բնահանուր թվի մեջ երևանցիների զերազմացությունը (0,45 մասը—աղյուսակ 15, 1865 թ.) համապատասխան է, որչափայն Ալեք-Պոլի այդ կարգի բնակչությունը կազմում էր բնահանուր թվի

²⁸ Կ. Վախաղյուց, Մի փաստաթուղթ Ախալցխայի հայերի կենցաղի վերաբերյալ, ԲԵՂ, 1967, № 3, էջ 165։

²⁹ ՏԵՄ Է. Վախաղյուց, Արևմտահայերի ողջալուստեսական և բազմաբնույթ կազմությունը 1800—1870 թթ., Երևան, 1967, էջ 112, 115, 162, 177։

³⁰ Բ. Հակոբյան, նյվ. աշխ., էջ 126։

³¹ Նույն տեղում, էջ 403։

³² Ը. Ա. Բախարոս, նյվ. աշխ., էջ 60։

³³ Բ. Հակոբյան, նյվ. աշխ., էջ 383—384։

³⁴ Ոսկերիկյան Հայաստան, Երևան, 1967, էջ 216։

0,34 սառը, յայնուամենայնիվ, արհեստավորների թվով Ալեք-Պոլը ղեկավարում էր Երևանին, որովհետև Երևանում մեծությամբ էին առևտրականներն ու այգեգործները: Երևանի արհեստագործությունը հիմնականում կապված է եղել դյուղառնտեսության հետ, մինչդեռ Ալեք-Պոլինը, տեղի պահանջները լավարարելուց բացի, նշանակալի չափով արտադրանք է արտահանել նաև Թուրքիա³⁵:

Ալեք-Պոլի արհեստագործական արտադրանքը տարածում է գտել ու սպառվել նաև Անդրկովկասի բազմաքանակությամբ ու դյուղերում: Շինարար արհեստավորները կառուցումներ են արել այդ սահմաններից էլ դուրս, ուրիշ քաղաքներում:

Այսպիսով Ալեք-Պոլը հիմնականում արհեստավորական քաղաք է եղել: Նրա դարդացումն ընթացել է հիմնականում արհեստագործության զարգացման և ընդլայնման հաշվին, որով և ընդունվում է քաղաքի արհեստավորական բնույթը: Արհեստագործության կողքին սկսում են երևան դալ նաև սուռչին գործարանային, արապերական փոքր ձեռնարկությունները: 1865 թ. բնակչության թվով Ալեքսանդրապոլը արդեն զգալիորեն ղեկավարում է Երևանին (Երևանի բնակչության 1870-ի դիմաց Ալեք-Պոլինը՝ 16814)³⁶:

Համեմատաբար նոր գարդացող Ալեքսանդրապոլը իր ակաբով ներկայացրել է արևելյան տիպի նոր քաղաք: Ամենուրեք Շիրակի դաշտավայրին շատ բնորոշ միհարկանի, սև քարերից ամուր կառուցված շենքեր, որոնց հուղածածկ տանիքները տխուր ակաք են սվել նրանց: Զինվորական մի պաշտոնյա նկարագրելով Ալեքսանդրապոլը, նշում է, որ չնայած քաղաքը նոր է, սակայն համանի տեսք ունի, որովհետև տները թիթեղյա տանիքներ չունեն³⁷, Ալեքի են ընկել քաղաքի կենդանիներն ու հարուստների քանդակադարձ քիվերով անները:

Չնայած քաղաքի վերակառուցումը դանդաղ ու դժվար էր կատարվում, այնուհանդերձ, սեղում կառուցողական արհեստների դարդացածությունը և շինանյութերի առատությունը նպաստում էին քաղաքաշինությանը:

Կառուցողական արհեստների տարածվածությունը այստեղ բացատրվում է մինչև դադի տեղում այդ արհեստների առկայությամբ: Քարտաշությունը, հյուանությունը Շիրակում տարածված արհեստներն էին, և կուժայրի-Ալեքսանդրապոլը

չէր կարող իր պատմական շրջապատի շքեղ կառույցները կերտողների ժառանգորդները չունենալ: Միայնակառուցում էին դստերում հոյակերտ Անին, Մարմաշենը, Տեկորը, Երեբունյքը, Հոռոմոսը, Արթիկը, Դանիշյան, Հառիճը, Ղուլավանը և այլն: Հայ վարպետները բնագործական էին շինարարական միտք տեսնիկան, ուսումնասիրում նշանավոր ճարտարապետներ Տրդատի և Մանվելի կառուցած կոթողները, ստեղծում դրանց մանրակերտվածքները³⁸:

Ալեքսանդրապոլը, այսպիսով, հետզհետե ստանում է բարեկարգ տեսք, որին նպաստում էր նաև այն, որ մեծացող քաղաքի կառուցումը ինքնահոսի չէր մատնված: 1870 թ. Ալեքսանդրապոլն ուներ քաղաքի ճարտարապետ³⁹, իսկ 1872 թ. կատարվել է Ալեքսանդրապոլի երկրորդ համակազմումը: Այն կառուցվում էր ավելի ժամանակին հայանի նոր քաղաքների տիպով, ուղիղ փողոցներով, որոշակի նախադրված և սկսեց տարբերվել ստեղծվածության շատ քաղաքներից: Եվ եթե 1830-ական թվականներին Ալեքսանդրապոլի մասին խոսում էին միայն որպես «կեղևիկ», ապա այս խոստացող⁴⁰, արևելյան տիպի քաղաքի, ապա XIX դ. II-րդ կեսին Ալեքսանդրապոլը իր բնույթով համարվում էր արդեն ոչ տիպիկան, բարեկարգ քաղաք: Հաշվետվություններից մեկում նշվում է. «Փողոցներն այստեղ ուղիղ են ու լայն, շատ ակաքներում կառուցված են հարմարավետ մայթեր, դիշեր քաղաքը լավ է լուսավորվում: Մեծ թվով սուսների ներկայությունն այստեղ և կլիմայական միջանկնից աղբյուրների առկայությունը բնակչությանը ծանոթացրել են կլիմայական կյանքի պահանջներին: Ամբողջ բնակչությունը քիվ թիվ շատ լավ խոսում է ռուսերեն, որը հազվադեպ երևում է Երևանի նահանգի ուրիշ քաղաքներում»⁴¹:

Նորակառույց Ալեքսանդրապոլում էլ, սակայն, դեղեցիկ շենքերի կողքին կային շատ անհրապույր տներ և թե մեկը, թե մյուսը հաճախ եղել են խոր ոլորիսպների ետևը թաքնված: Ա-

³⁸ ՊԻԱ, գ. 103, Ն. Նիկողոսյանի նյութերը, տետր 7:

³⁹ Ալեքսանդրապոլի առաջին ճարտարապետներից էր Ինժեներ Ա. Լեոնտեր, 1907 թ. նրան փոխարինել է Ինժեներ Ա. Աղարալյանը: Ալեքսանդրապոլի ճարտարապետներ են եղել Ա. Սարկիսյանցը (1909 թ.), Գ. Մ. Մարտինովը (1913 թվականից): Տե՛ս Ա. Կ. Գրիշորյան, «Формирование развигие технической инженерии Армении, Ереван, 1966, с. 65.

⁴⁰ «Военно-статистическое описание Российской империи», т. XVI, ч. VI, Эриванская губерния, СПб., 1853, с. 223.

⁴¹ Նույն տեղում, էջ 259:

³⁵ Թ. Հակոբյան, Եզ. աշխ., էջ 413—414:

³⁶ Եզ. աշխ., էջ 526:

³⁷ Военный сборник, т. XI, СПб., 1860, II отд., стр. 483—484.

կանախաղճիկից մեկը նշում է, որ շատ տներ շնա-
յած կառուցված են արվեն ըստ փողոցների, բայց
կան և այնպիսիները, որոնք հին սովորությամբ
թաղանթում են պարիսպների ետևը⁴²։ Արևելյի օտար
տիրապետողների մշտապես կրկնվող անօրենս-
թյունների ու սոսնձությունների հանդեպ ուշա-
դրությունից հետո մնալու զգուշավորությունը
ամուր էր նստած հայ մարդու մեջ և թերևս պատ-
ճառներից սեկն էլ այս էր, որ նույնիսկ Ալեքսան-
դրապոլի ապստամբ շրջանում այդ սովորությունն
իր արտահայտությունն էր պահում երբեմն նույն-
իսկ հիմնալի շենքերի հասակադներում։

Որպեսզի ավելի սրուշակի պատկերենք 1850-
ական թվականների Ալեքսանդրապոլը, բերենք
մամուլի պաշտոնական հաշվառություններից
մի վկայություն, որ նշվում է Ալեքսանդրապոլի
75 թաղամաս, 52 ավերակ, 186 ջրհոր, 2048 քա-
րաշեն տուն⁴³, որոնցից 200-ը լավ հակառակում
այդ բալսրը 11,280 բնակչության համար, որից
363-ը՝ մահմեդական և 105-ը՝ հույն։ Շենքերը՝
տեղական փափուկ սև առփից, կա 1849 թ. հիմ-
նոված ուղղափառ եկեղեցի (География Победо-
носца), երկու հայկական եկեղեցի՝ Աստվածա-
ծինը և կաթալիկ եկեղեցին, երկու շուկա՝ սովորա-
կան և անասունների վաճառքի համար (մալի մե-
ղան), 7 բարձրահարա (հյուրանոց), 850 կրտսի,
3 բաղնիկ՝ Տիգրանովների, Վերիվանների և հույնե-
րի, մեկ հրապարակ «Մեծ» անունով, զերեկմա-
նոցներ՝ մեկ բրիտանական և չորս, երկու բրի-
տանական հին, մեկ մահմեդական և մեկ ընդ-
հանուր մանտախոտային։ Քաղաքի շրջակա հողա-
յին տարածությունները հիմնականում բանջարա-
նոցներ, արոտատեղիներ, խոտհորքեր⁴⁴։ Այդ նույն
թվականներին բաղարում կար 28 համարություն,
որոնց մեջ ընդգրկված էր 2602 արհեստավոր⁴⁵։
Այս բոլորն ապացույց է կարճ մամուլական
տանգրությունից զարգացման։ Այս երևույթը հետե-
վան էր նաև այն համեմատաբար ապահով դրու-
թյան, որն ստեղծվել էր Ռուսաստանի տիրապե-
տության առաջ տնցած այս հաստատում, ապահու-
վություն, որ հնարավորություն էր ապրիտ առաջի
բնակչությանը արագորեն իր կյանքը բնականոն
հունի մեջ գնելու⁴⁶։ Անդրկովկասյան շատ քաղաք-

ների նման՝ Գումրի-Ալեքսանդրապոլը նույնպես
վերածվեց և շարունակեց իր զարգացումը։

Այսպիսով, Ալեքսանդրապոլը հետզհետե մե-
ծանալով, անդրկովկասյան քաղաքների մեջ սկը-
սում էր նշանակալի առաջ գրավել։ Աշխատունակ
բնակչության հիմնական մասը դրադվում էր ար-
հեստագործությամբ, որի պահանջը XIX դ. երկ-
րորդ կեսից այսպես զնալով աճում էր ու զատառ
դարձավ արհեստների զղալի ընդլայնմանը և... Ին-
չըր արհեստագործությունների աճումը, որը կապի-
տալիզմի զարգացման նախնական քայլերն է
ներկայացնում, արտահայտվել և արահայտվում
է երկու կերպ. նախ՝ մանր արդյունաբերողների ու
արհեստավորների զարգացում կենարոնական, վա-
ղուց բնակված ու տնտեսական տեսակետից ամե-
նազարգացած նահանգներից դեպի ծայրեր կրկնելու
երկրորդ՝ տեղական բնակչության մեջ նոր մասը
արհեստագործությունների ստեղծումով և առաջ
դրություն ունեցած արհեստագործությունների
ընդլայնումով⁴⁷։ Իման երևույթ, ինչպես առաջինը,
նկատելի էր նաև այստեղ։ Չնայած արհեստավոր-
ության թվի զգալի աճին, արվեն 50-ական թվա-
կանների Անդրկովկասի առ Հայաստանի մյուս
քաղաքների նման այստեղ նույնպես արհեստներն
ապրում էին զարգացման վերջին փուլը։ XIX դ.
60-ական թվականներին արհեստագործության
որոշ ճյուղեր արվեն հետզհետե վերածվում էին
կիսաֆարրիկային։ Ինչուս կողմից, զանազա մուտք
զործող զործարանային արտադրությունը զարգաց-
ման սկզբնական շրջանում կիսազործարանային,
կիսաֆարրիկային ձևնարկությունների ձևով բա-
վական մամուլական պանվում էր արհեստավորական
համարությունների կազմում։ Իման ձևնարկու-
թյունների համար կազմավորման շրջանում
նպաստավոր էր համարությունների կազմում
լինելը։

Գործարանային արտադրության մուտքը Ան-

այնպիսիներին, դիտողներին, որոնք հետաքրքրության տե-
ռանկությունից զարմանալի էին համարում մեծ կառույցներ անե-
լու հայերի ձգտումը, Այսպես, երբ 1876 թ. Ալեքսանդրապո-
լում զորախաղերին մասնակցելու նկատ կայսեր եղբայր Մի-
խայիլը տեսնում է ընդամենը մի բանի տասնամյակի բնադ-
րում կատարված կառույցները, հասկալես «Ամենափոփո-
խակ եկեղեցին, ինչպես պատմում են, զարմանալով սկզբա-
կերեն նշում է, թե եկեղեցին լավն է, սակայն պակասում են
սեփեղները, որոնցից ուր որ գնայիր, կարողանայիր ձեռք հեռ
տանել, Տե՛ս Պի՛կ, դ. 103, Կ. Բամբալյանի նյութերը տե-
սիր 2։

⁴⁷ Մ. Կ. Դեբեմաձե ու մը, նշվ. աշխ., էր. 91; Ի. Ի.
Դեբեմաձե, Մ. Կ. Դեբեմաձե, նշվ. աշխ., էր. 103—104.

⁴⁸ Վ. Ի. Ալեկև, երկեր, հ. 3, էջ 425.

⁴² Военный сборник, т. XI, II отд., стр. 481.

⁴³ Այդ նույն թվականներին, որինակ, Քաթախում տեղ
է 181 շենք և 9 փողոց։ Տե՛ս Մ. Կ. Դեբեմաձե ու մը, նշվ. աշխ., էջ 92.

⁴⁴ Տե՛ս «Военно-статистическое обозрение», стр. 259.

⁴⁵ Կ. Կապույան, Անիական, 1937, էջ 16.

⁴⁶ Այս բանը երբեմն անհասկանալի էր մեծ ուսուցիչ

դըրկովկասի քաղաքները կաաարվում էր շատ դան-դաղ: Բայց Անդրկովկասի դրեթե բոլոր արհեստավորական քաղաքներն էլ հետզհետե կուլ էին դնում կապիտալիստական արտադրությանը: «Արդյունաբերության նախկին ֆեոդալական կամ համքարային կազմակերպությունը չէր կարող այլևս բավարարել նոր շուկաների համընթաց աճող պահանջը. նրա անդը դրավեց մանուֆակտուրան: Համքարային վարդեսները դուրս մղվեցին արդյունաբերական միջին դասի կողմից: Աշխատանքի բաժանումը սարքեր կորպորացիաների միջև անհետացավ՝ տեղի տալով աշխատանքի բաժանման ռուսների արհեստանոցների ներսում»⁴⁹: Այսպիսով, XIX դ. II կեսը, համքարային արհեստագործության քայքայման վերջին փուլն էր:

1870—80 թթ. երկիր ներհոսող արդյունաբերական ապրանքները դանդաղ քայքայում էին արհեստագործությունը՝ արհեստավորներին մղելով դեպի արաադրական ձեռնարկությունները: Որոշ արհեստների քայքայման հետ մեկանգ հանդես էին դալիս քիչ թե շատ ժամանակակից արդյունաբերական օբյեկտները: «Տեղի էր ունենում (կովկասում—Վ. Ս.) տեղական դարավոր առնայնագործական» արհեստների արտադրումը, որոնք բնկնում էին Մոսկվայից բերված ֆարրիկանաների մրցության հարվածների աակ: Ընկնում էր զենքի վաղեմի տրտադրությունը..., ընկնում էր երկաթի տնայնագործական մշակումը..., ինչպես նաև տղնձի, սսկու և տրծաթի, կավի, ճարպի ու սոսալի, կաշիների և այլ նյութերի անայնագործական մշակումը...: Այսպիսով, ռուսական կապիտալիզմը կովկասը ներդրավում էր համաշխարհային տարանքային շրջանառության մեջ, համահարթում էր հինավուրց նահապետական ինքնամոխիվածությունն մնացորդ հանդիսացող նրա տեղական առանձնատկությունները, իր գործարանների համար շուկա էր ստեղծում⁵⁰: Սակայն դեռ համքարությունները պահպանում էին իրենց պոյությունը, որովհետև դեռևս ուժեղ չէր կապիտալիստական տրդյունաբերության դարգացումը հատկապես ծայրամասերում: Նկատի ունենալով որոշ արհեստների արտադրական նշանակությունը, իշխանությունները աշխատում էին որոշ սահմանափակումներով, այնուհանդերձ, պահպանել այդ կտրմակերպությունները⁵¹:

⁴⁹ Վ. Մարտի և Ֆ. Էնգելս, Կոմունիստական պարտիայի մանիֆեստը, Հայպատհրատ, 1952, էջ 36—37:

⁵⁰ Վ. Ս. Էնգելս, Երկեր, հ. 3, էջ 771:

⁵¹ С. А. Ермаков, Կովկ. աշխ., էջ 358:

Ժամանակի հետադուտողները պատճառաբանել են արհեստների դոյություն հանդամանքները: Արհեստների քիչ թե շատ կայուն դոյությունը Անդրկովկասում նրանք բացատրել են ֆարրիկագործարանային արդյունաբերության նվաղությունը, տարբեր արհեստների համար անհրաժեշտ հումքի առատությունը, Անդրկովկասի հետ հաղորդակցության անհարմար ճանապարհների. գործունյա և ընդունակ արհեստավորական իսավի առկայությամբ և այլն⁵²:

Արդյունաբերական արտադրանքի մուտքը հարվածում էր անդրկովկասյան քաղաքների արհեստներին, նույնիսկ Ախալցխայի հոչակված սակերիչները ստիպված էին գիջել Մոսկվայի ֆարրիկաների մրցակցությանը, որոնք ընդօրինակելով Ախալցխայի վարպետների գործերը, սկսել էին մեծ քանակությամբ նույնատիպ արտադրանք տալ, որը նրանց վրա ավելի էժան էր նստում⁵³: ու ավելի էժան վաճառահանվում: Արդյունաբերական էժան ապրանքների մրցմանը չդիմանալով, Ախալցխայի տարբեր արհեստավորներ փակում էին իրենց խանութները, տեղավորվում այլ քաղաքներ՝ տեղից-տեղ⁵⁴: Ալեք-Պոլում նույնպես տրդյունաբերության դանդաղ մուտքը հնուհնու կրճատում էր արհեստների թիվը: Մնացորդ արհեստները շուկայում մրցակցությանը դիմանալու համար աշխատում էին ներսցնել իրենց արտադրանքը, ծառայել տեղական այն կարիքներին, որոնց արդյունաբերությունը չէր կարող բավարարել: Նրբանում և էլ ավելի ուրակյալ էր դառնում ոսկերչությունը, սոսիական ղերձակությունը, տոսղնագործությունը, քարաաշությունը: Մաշակատներն իրենց տրտադրանքը լցնում էին տարբեր քաղաքներ, նույնն էին անում նաև այլ քաղաքների արհեստավորները⁵⁵: Սակայն աստիճանաբար ես էին դնում դարրնության ուրոշ ճյուղերը, սդոցտոյործությունը (խղարճություն), համետադործությունը, տղնձագործությունը և այլն⁵⁶: Քայքայվող արհեստներից դուրս մնացած արհեստավորները աշխատանք էին

⁵² А. С. Пиралов, Краткий очерк кустарных промыслов Кавказа, Тифлис, 1900, стр. 5—6.

⁵³ С. Гулиамадаров, Город Ахалцих, СМОМПК, вып. XI, Тифлис, 1891, стр. 210.

⁵⁴ Վ. Ղաֆադարյան, Մի փառասիրույթ Ախալցխայի հայերի կենցաղի վերաբերյալ, Բեձ, 1967, էջ 170:

⁵⁵ Խորպոսկան կապիտալի ներհոսի նկատմամբ նմանօրինակ երևույթ էր տեղի ունեղել գարի կեներին նաև Արեմտյան Հոյաստանում և այլուր: Տե՛ս Ն. Ղաֆադարյան, Կովկ. աշխ., էջ 203:

⁵⁶ ՊԻԱ, գ. 103, Ն. Նիկողոսյանի ելութիցը, տետր 7:

մետրում նորաստեղծ ձևոնարկություններում և այլուր, դառնում օրավարձու մշակներ:

Խախտվում են նաև արհեստավորական քաղաքների համաքարական կարգը, շարքերը, թաղամասերը: Որոշ արհեստների անկման և համաքարական կազմակերպության թուլության հետևանքով շարքերի մեջ հանդես են գալիս տարատեսակ արհեստներ: Իրողության մեջ մտնելով միմյանց հետ՝ կրողակները, արհեստանոցները զուրա են գալիս շարքերից և տեղավորվում մարդաշատ, նպաստավոր տեղերում՝ խաչմերուկներում, ճանապարհների վրա և այլուր: Տարբեր տիպի արհեստները խմբավորվում են միասին մեկ տեղում, հարմարվելով հաճախորդի պահանջներին: Այդպես էր լինում Բիֆլիսում, Երևանում, Ախալցխայում, Ալեք-Պոլում, ամենուրեք, ուր թափանցում էր արդյունաբերությունը:

Արհեստավորությունը հեշտությամբ չէր գիշում իր տեղը՝ հատկապես Ալեք-Պոլում, ուր արհեստների գործադրությունը հնարավորություն էր տալիս մրցելու պրիմիտիվ արդյունադրծության հետ: XX դ. սկզբներին Ալեք-Պոլում ղեկավարին մեծ թվով համաքարություններ, որոնք իրենց պոլյությունը պահպանելով, պահպանել էին նաև որոշ համաքարական կարգեր: Համաքարություններից շատերը իրենց պոլյությունը պահպանեցին մինչև 1920 թ.:

Գրեթե հիմնականում ձևերի աշխատանքի վրա հիմնված պրոծարանային արդյունաբերությունը դարպանում էր սուսջին հերթին սննդամթերքի, հումքի, խմիչի և կենցաղային սուսջին տնտեսականության ապրանքների ու մթերքների տրամադրության ուղղությամբ: Սրանք կենտրոնացված էին սննդատների, նախկին սնայնադրծ վարպետների, հարստ վաճառականների ձևերին և ունեին կիսաֆարրիկային բնույթ: Այս ախի պրոծարանները ստեղծվում էին արհեստավորական կիսաֆարրիկային կրողակների բազայի վրա, որպիսիք բուլական շատ էին Ալեք-Պոլում: Օրինակ՝ օճառի պրոծարանները (սապոնխանա)՝ սուսյունի Գալոյի պրոծարանը, Հովսեփի, Բոչենդ Գալոյի (Ջատիկյան), Մատուրով Միսակի (Մատուրյաններ), սապոնձի Ալեքսանի (Գորոյան), կաշվի պրոծարանները (գորաղխանա)՝ Թայմուրենց, Ջաքարենց, որոնք դառնում էին «Ձորի բողաղում», Տեր-Հովհաննիսյանենց (14 փողսցի վրա), Կակոսենց (22 փողսցի վրա), Արշակ աղինը (Մխկյան)⁵⁷, Սրանք բոլորն էլ սկզբնական շրջ-

շանում փոքրիկ խանութներ էին, աշխատում էին փախադարձ օգնությամբ, երբեմն միասին: Այս ձևոնարկությունների մասին, որպես պրոծարանային արդյունաբերություն, հավելավություններ էին ներկայացնում ուսական կառավարությունը: Այսպես, 1880—90-ական թթ. Երևանի նահանգի Ալեք-Պոլ քաղաքը ներկայացնելիս հիշատակվել է, որ այնտեղ կա 10 օճառագործարան, 2 կաշվի մշակման, 4 աղյուսի, 4 կաթնամշակման, 2 բուստագործարան, գորգի, օղու, զինու և այլ պրոծարաններ: Իրականում սրանք նկարագրվող յոթանում, արհեստավորական արտադրամաս կամ կերպակ են եղել, շնայած որոշ ձևոնարկությունների արտադրանքն արգեն գալի էր Հատկապես ունեվոր վաճառականների, հարստաների ձևերին գրունդ արհեստանոցներն էլ, աստիճանաբար մեծացնելով իրենց պրոծունությունը, վերածվում էին մեծ ձևոնարկությունների: Խմիչի, կրի և այլ ձևոնարկությունները մեծանալով, հետզհետե կլանում էին մանր ձևոնարկությունները, քայքայված արհեստավորներին: Ալեք-Պոլում արգեն կային նաևակալի օղու գործարաններ՝ Խոյեցոնց (Խոյեցյաններ), Սեյանովների, Ջաքարենց, Խորյենց Հարովի, դավողի Գաբրիելի, Վարդանի, Ղազարի և այլն: Հայանի էին Ջատիկյանների, Եսահայկյանների, Քյանդարյանների և ուրիշների կրի պրոծարանները, որոնք դառնում էին քաղաքից զուրա, այժմյան տեքստիլ գործարանի մաս (Ձիթողցոնց վարոո) և թուրքական թաղի մաս: Գարեջրի պրոծարաններ՝ Մադիկյանների, Ձիթողցյանների և այլն: Ինչ էն իրենցից ներկայացրել այլ պրոծարանները, ցույց աանք Ձիթողցյանների դարենջրի պրոծարանի օրինակով: Սա զանվիլ է նախկին տեքստիլ, այժմյան գուլպալի պրոծարանի հին մասնաշենքում: Այս պրոծարանն ունեցել է 400 հսկա շան՝ յուրաքանչյուրը երկուսից-երեք հազար զուլլ տարողությամբ, սրանք փայլալա մեծ շաներ են եղել և մաքրման ու այլ նպատակով տեղափոխելիս սոսկալի զորպոց են հանել փողոցում: Իղեղ, բնակիչներն այդ ձայնը լսելով բաղմանշանակալից ասել են, թե «Ձիթողցոնց պիլի շաները կտանին»: Գործարանի հսկայական նկուղներում միշտ եղել են սառցի մեծ պաշարներ: Դրանք բերվելիս են եղել Ախուրյան (Արիալայ) ղեկից: Ձրմոանը մեծ կառոններով կտրել են այն ու քարշքով կամ բեռնակառքով (ֆուրգոնով) տեղափոխել են

⁵⁷ СМОМПК, ВМН. XI, стр. 140.

⁵⁸ ՊիԱ, գ. 103, Մ. Բամբաղյանի նյութերը, տետր 4:

⁵⁷ ՊիԱ, գ. 103, Մ. Բամբաղյանի նյութերը, տետր 4:

գործարան⁶⁰, Այս գործարաններն ունեցել են տար-
րեր գործերի զգալի թվով արհեստավոր-
ներ, լանվորներ: Ավելի նշանակալի էր $\overline{\text{XIX}}$ դա-
րի վերջերին ստեղծված մեխանիկական գործա-
րանը (Հեքիմյանների): Դա սկզբում կիսատնայ-
նագործական բնույթի էր, սակայն 1905 թ.
վերածվեց մեխանիկական և շուգունի ձուլման
գործարանի, որտեղ կային բարձրորակ տեխնիկա-
կան մասնագետներ⁶¹:

Ցարական կառավարության դադարալից քա-
ղաքականությունը, իրար հաջորդող պառնալի-
ները, դրանց հետևող տնտեսական վիճակի ան-
կումը, հիվանդություններն ու տարրեր արհավիրք-
ները տնտեսատու վիճակ էին ստեղծում հատկա-
պես Ռուսաստանի հեռավոր սահմանամերձ շրջան-
ներում: Յուրաքանչյուր փորձությունից հետո սկըս-
վում էին տնտեսական դժվարություններ ու սով:
Այս ամենը մի քանի առանձնակ էր առնում
բնակչության դարձագույնը: Քայքայվում էին ար-
հեստները, համաքայությունները, կենցաղում մարդ-
կանց հոգեբանության մեջ մուտք էր դրածում սո-
տիալիզմի տեսությունը, վերականգնվում էին հին սո-
վորություններ և այլն: Հազիվ թե սկսում էր առանց
այն էլ անապահով կյանքը քիչ թե շատ մտնել իր
հունի մեջ, երբ դրան հեռանում էին նոր պառնա-
լիզմներ կամ արհավիրքներ՝ աղքատության գիրկը
նետելով օրվա հացի կարոտ արհեստավոր բնակ-
չությանը, որի մի ղղալի մասը, մանավանդ $\overline{\text{XX}}$
դ. սկզբին որպես էժան աշխատուժե լավարարում
էր ոչ միայն անդալան գործարանային արդյունա-
բերությանը, այլև հետհեռան մուտք գործող ու
բնդլանվող ամբողջ կապիտալիստական արդյու-
նաբերությանը:

Եթե միայն հիշատակենք, թե որքան փոր-
ձություններ են անցել Ալեք-Պոլի զլխով ընդա-
մենը մի հարյուրամյակից էլ պակաս ժամանակա-
շրջանում, ապա պատկերը պարզ կլինի: Դեռ
չէր վերջացել ռուս-պարսկական պատերազմը
(«Պասկևիչի կռիվ»), երբ հեռանց 1827 թ. երկրա-
շարժը, այնուհետև 1837, 1841 թթ. ջրհեղեղ-
ները, 1841, 1845 թթ. ժանախար, 1847 թվա-
կանի մորեխը, Այնուհետև սկսվեց Ղրիմի պա-
տերազմը («Բերտոլտի կռիվ»), 1862 թ. ջրհե-
ղեղը, 1868 թ. երկրաշարժը, 1871—1872 թթ.
ջրհեղեղները, հեռանց նոր պատերազմը Թուրքիա-
յի հետ 1877—78 թթ. («Ղոռիս-Մելիքովի կռիվ»),

1878 թ. ջրհեղեղը, 1892 թ. ժանախար, 1898 թ.
ջրհեղեղը, 1903 թ. ջրհեղեղը և 1910 թ. ժանախար,
1914—1918 թթ. սկսվեց համաշխարհային
պատերազմը, 1918 թ. մայիսի 18-ի թուրքական
գործի ներխուժումը, որը տևեց մինչև 1919 թ.,
1920 թ. հոկտեմբերին թուրքերի նոր ներխուժումը,
որը տևեց մինչև 1921 թ.: Ալեք-Պոլն ապրել է նաև
գտնակցական կառավարության ոչ պակաս աղե-
տալի շրջանը: Այս բոլորը առիթ էին դառնում
սոսկալի ավերածության ոչ միայն Ալեք-Պոլում,
այլև շրջակայքում և նրանից շատ հեռու: Կտրվում
էր կապը քաղաքների հետ, անկում էր ապրում
կյանքը: Այդ նույն շրջանում փորձություններ ապ-
րեցին նաև հարևան քաղաքները և շրջանները՝
1840 թ. Ակոբի գյուղի սոսկալի երկրաշարժը,
1899 թ. էրպրումի երկրաշարժը, 1868 թ. Ախալքա-
լաքի, Արդահանի, 1899 թ. նորից Ախալքալաքի,
1900 թ. Կարսի շրջանի երկրաշարժը և այլն⁶²:

Այս ամենը ցիրուցան էին առնում Ալեք-Պոլի
անօգնական բնակչությանը, որ տեղափոխվում
էր տեղից-տեղ՝ Ախալքալաք, Թիֆլիս և նույնիսկ
վերադառնում Արևմտյան Հայաստան, Հայտնի է,
որ 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմից
հետո մոտ 700—800 տուն գաղթեցին Կարս, Սա-
րիղամիշ, Կաղզվան, Արդահան և այլուր: Սակայն,
այս ամենով հանգերձ, քաղաքը մեծանում էր
XIX դ. վերջերին Ալեքսանդրապոլում կար մոտ
25 հազար բնակչություն (3825 տուն), որից 60
տուն հույն, 100 տուն թուրք, 100 տուն ռուս ղին-
վորներ⁶³, մի քանի տուն հրեաներ:

1877—78 թթ. պատերազմից հետո, որպես
ռազմական կեա, Ալեքսանդրապոլը կորցրեց իր
նշանակությունը և սահմանային գծի անդադարա-
ման կապակցությամբ, այդ իմաստով, առավել
նշանակություն ստացավ Կարսը՝ մի հացառատ
շրջան, որն իրեն սկսեց ձգել նաև քայքայված
գյուղացիությանն ու քաղաքային բնակչության մի
մասին: Բնակչության նոր դրաված վայրերը վե-
րադառնալու պառնալիցներից մեկն էլ, ժամանակի
ուսումնասիրողների կարծիքով, այն էր, որ Թուր-
քիայից ներգաղթած հայ բնակչության նկատմամբ
լիովին չկիրառվեցին այն պահանջները, որ նրանք
ներկայացրել էին 1831 թ., Պասկևիչի անվամբ⁶⁴,
Իսկ թուրքական կառավարությունն իր անտեսու-
թյան վերականգնման ջանքերից ելնելով, պևս

⁶⁰ ՇԱԽԱ, Կ. Դուրգարյանի հաղորդած նյութերը:

⁶¹ А. К. Григорьянц, նշվ. աշխ., էջ 59:

⁶² ՊԻԱ, գործ 103, Ն. Նիկողոսյանի նյութերը, տետր 1 և
3, Մ. Թամրազյանի նյութերը, տետր 2, 3, 4:

⁶³ Տե՛ս Կ. Կոզմոյան, Լենինական, 1957, էջ 15:

⁶⁴ В. И. Акимов, Свадебные обычаи ахалцыхских
армян, М., 1889, стр. 1.

1830 թ. սկսած, վարում էր հայ բնակչությանն իր երկրում պահելու բազմաթիվ անոթները:

Այս իրավիճակում վաշխառություններ, խաբեություններ և չարաշահումներով հարստություն էին գիտում վաճառականները, հարուստ զործարարներն ու միկիտանտները շատերը, բարոյական անկման մասին և խստում միկիտան-գինետների հետզհետե աճող այն մեծ թիվը, որը զարմացրել էր նաև ժամանակի ուսումնասիրողներին, Բվարկելով գինու, սպիրտի պահեստները, խմիչքի ձևափոխություններն ու կրթականը, ուսումնասիրողներից մեկը նշում է, որ Ալեքսանդրապոլում եղած խմիչքի ձևափոխությունների թիվը այնքան էր (114), որ բնակչության յուրաքանչյուր 200 հոգուն ընկնում էր մեկ ձևափոխություն⁶⁵։ Այս իրադրությունը պատճառ էր դառնում նաև ազատ բանվորական ուժի, արդյունաբերական պրոլետարիատի առաջացման:

Անդրկովկասում խոշոր կապիտալիստական ձևափոխություններ զանգաղ էին առաջանում. որովհետև սուսակտն կառավարությունը Անդրկովկասը պիտում էր ավելի սրտես կապիտալիստական արտադրանքի շուկայի և գյուղատնտեսական հումք տրամադրող բազայի Հայաստանի տրդյունաբերական ապրանքների պահանջները բավարարում էր հիմնականում ներմուծմամբ, ծանր տրդյունաբերությունը պրեմի չկար⁶⁶։ Գործարանային արդյունաբերությունը զարգանում էր այն չափով, որբանով բավարարում էր անվտանգ պահանջները և հումք էր մշակում ու մասնավարարում ուսական արդյունաբերությունը Ալեք-Պոլում հիմնականում ուսկծվում էին ճարտարագիտի, օճառի, կաշվի, գարեջրի գործարաններ, արաղաղներ, ձիթհաններ, ապրուսի գործարան, բրտաաղարծություն, կրի, հանրային ջրերի գործարաններ, իսկ հետո (1912 թ.) նաև ջուհակառոց, սպիրտի ձևափոխություններ, շուղունի ձուլարան, մեխանիկական գործարան, Ծ՛վ այդ գործարանները, և՛ զրանց հետ մեկտեղ բաղմաթիվ արհեստանոցներ բավարարում էին թե՛ քաղաքի և թե՛ դավառի պահանջները և զեռ տրտահանում այլ դավառներ⁶⁷։

Ռուսական և եվրոպական կապիտալիստական արտադրանքի արտահանման, տեղի հարստությունները շահագործելու տեսակետից խոշոր նշա-

նակաթյուն ուներ Կովկասի և Անդրկովկասի արանսպորտային կապը Ռուսաստանի հետ, որը ԱՄՀ-ը վերում իրականացվում էր թիթև շաբարվոր խողալին հանապարհներով Այդ նպատակով 1898 թ. սկսվում են Թիֆլիս—Ալեք-Պոլ, Ալեք-Պոլ—Կարս (1899), Ալեք-Պոլ—Երևան (1900—1903 թթ.), Կարս—Սարիգամիշ, Երևան—Ջուֆա եղանակով կառուցվելու կառուցումը։ Տրանսպորտային ինտենսիվ կապի սակզծումը նպաստեց Անդրկովկասում կապիտալիզմի զարգացմանը։ Ալեք-Պոլը զարծավ արհեստավորական և առևտրական նշանավոր կենտրոն, որակը 1914 թ. արղեն կար 51 226 բնակիչ։ Որակես երգաթուղային հարմար հանդույց, Ալեք-Պոլում հիմնվում է նաև վաղսնային ղեկո, որը միակն էր այդ ուղեմասում։ Ալեք-Պոլում սլտովավոր համարվող արհեստների արհեստավորների (զարբինների, փականագործների, որմնագիրների, հյուսների և այլն) համար խոշոր նշանակություն ունեցավ առանձնապես ղեկոն, ուր մեծ թվով բանվորներ ընդգրկվեցին։ Այդպիսի մեծ ձևափոխությունում աշխատելու ձգտումը մեծ էր Այստեղ կար որոշ ապահովվածություն, կտու արտարին աշխատհի հետ, որին և ձգտում էին պարիսկվածությունից ղուրս ղալ ցանկացող արհեստավորները։ Արանք այն վայրերն էին, ուր առաջինը թափանցեցին Ռուսաստանից եկող հեղափոխական ղաղափարները։ Ալեքսանդրապոլի երկաթուղայինները առաջիններից էին, որ բանվորական շրջաններում տարածում էին «Իսկրայի» ղաղափարները։ Ալեքսանդրապոլում բոլշևիկյուն խումը է ստեղծվում ղեռես կուսակցության II համաղումարի ժամանակաշրջանում։ 1905—1906 թթ. հեղափոխական կենտրոնական թերթերում լուսալանվում էին Ալեք-Պոլում ղարղացող իրաղարծությունները, և վերջապես 1917 թ. սովետների համաղուսաղուսանյան II համաղումարում Ալեքսանդրապոլի սովետի ներկայացուցիչը առաջիններից է, որ բվարկել է իշխանությունը սովետներին հանձնելու օղտին։ Ալեքսանդրապոլը հանղիսացել է սշ միտյն Հայաստանի բանվորական հեղափոխական շարժումների, այլև Հայաստանի, Անդրկովկասի և սովինի Ռուսաստանի կալսրություն ղինվորական շարժումների աղավել նշանավոր կենտրոններից մեկը⁶⁸։

⁶⁵ С.М.ОМГК, ыан. XI, с. 110.

⁶⁶ А. А. Арсакян, Армения под угрозой внешней интервенции, Ереван, 1967, с. 4.

⁶⁷ Կ. Կոզմոյան, Հեկնական, է, 18—19.

⁶⁸ Սովետական Հայաստան, Երևան, 1967 թ., էջ 216.

⁶⁹ Տե՛ս Հեկ Անինականի ղաղղոմի աղղին ղարտուղար Գ. Բ. ղարբուսանի ղեկուղումը Ալեքսանդրապոլը Անինական կուկելու 10-ամյակին նվիրված հանղիսավոր ղողղում.

Ալեք-Պոլի պրոլետարիատը աստիճանաբար մտնում էր քաղաքական պայքարի մեջ: Քաղաքական հեղափոխական պայքարի մեջ էին ընդգրկվում արտադրական ձեռնարկությունների բանվորները, արհեստավորները, որոնցից շատերը մասնակցելով տարբեր քաղաքներում, գծամասերում և այլուր կատառվող շինարարական աշխատանքներին, շրփվելով բանվորական և զինվորական առաջավոր մասսաների հետ, մասնակից էին գաղտնում այդ պայքարին: Ռուսական առաջին հեղափոխությունից սկսած մինչև սովետական կարգերի հաստատումը Ալեքսանդրապոլը Հայաստանի քաղաքական կարևոր եկեղեցիներից մեկն էր: «Հայաստանի բանվորության հնագույն այդ հանդերձանում է (Ալեքսանդրապոլում—Կ. Ս.), որ առաջին անգամ հայ աշխատավորությունը ոտքի էր ելել հանուն սովետական կարգերի հաստատման»,—նշում է ակադեմիկոս Ս. Հովհաննիսյանը⁶⁹: Քաղաքի աշխատավորությունը սերտ կապերի մեջ գտնվելով Ռուսաստանի և Անդրկովկասի արդյունաբերական կենտրոնների հետ ու դեկտվարվելով սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների կողմից՝ զուրթագույններով, ցույցներով ու զինված ելույթներով ակտիվորեն մասնակցել է հեղափոխական պայքարին: Ալեքսանդրապոլի բոլշևիկյան կազմակերպությունը արձագանքելով ռուսական հեղափոխությանը, կուսակցական-քաղաքական լայն դործունեություն է ծավալում ու անողոք պայքար մղում հեղափոխության թշնամիներին՝ դաշնակների, մենշևիկների դեմ, մեքսիցներում նրանց հակաժողովրդական քաղաքականությունը՝ սովի, կոտորածների, ժողովրդապաշտ պաշտպանների քաղաքականությունը: Սանիան Շահումյանի ղեկավարությամբ, սերտ կապ պաշտպանելով ռուսական հեղափոխական պրոլետարիատի հետ, Անդրկովկասի հեղափոխական պրոլետարիատը անողոք պայքար էր մղում գաշնակների, մոսսավսթականների և թուրք դավթիչների հարուցած պատերազմների դեմ: Անդրկովկասում սովետական կարգերի հաստատման համար հեղափոխական պայքարի օրինակ էր Ալեքսանդրապոլի բոլշևիկյան կազմակերպության ղեկավարությունը սկսված Մայիսյան ապստամբությունը 1920 թվականին, որը ծավալվեց Հայաստանի ռազմաթիվ վայրերում: Ալեքսանդրապոլը առաջինը ընդգրկեց սպասարարություն դրողը, և

1964 թ., 30-ր հունվարի, «Լենինական 40 տարի», Երևան, 1964, էջ 9—13:

⁶⁹ Տե՛ս «Լենինական 40 տարի», Երևան, Հայպետհրատ, 1964, էջ 33:

մայիսի 3-ին Ալեք-Պոլի ու նրա շրջակայքի իշխանությունը գտնվում էր կամուխստների ձեռքում:

Վերջապես, 1921 թվականի ապրիլին հաղթանակով պսակվեց Ալեք-Պոլի պրոլետարիատի հերոսական պայքարը: Սովետական Ռուսաստանի կառավարության պահանջով թուրքական օկուպանտները սկսում են հեռանալ Ալեքսանդրապոլի գավառից և զգալիորեն 11-րդ բանակի զորամասերի օգնությամբ ապրիլի 22-ին Ալեք-Պոլի գավառից լիովին դուրս են քշվում թուրքական զավթիչները, և հաստատվում են սովետական կարգեր: Ալեք-Պոլի դավառը մտնում է ՀՍՍՀ-ի կազմի մեջ⁷¹:

Անդրադառնալով քաղաքի արհեստավորությանը, նշենք որ նրա մի մասը ընդգրկված էր հեղափոխական քաղաքական պայքարի մեջ: Սակայն Ալեք-Պոլի բազմաթիվ արհեստավորներ, որոնց արհեստները դեռ ղդալի նշանակություն ունեին քաղաքի և գավառի տնտեսական-արտադրական կյանքում, անապատներ, չեզոք էին քաղաքական կյանքի նկատմամբ: Համբարությունները պարփակված էին պահում առանց այն էլ ռավականաչափ պահանջողական վարպետ արհեստավորների մի մասին: Իրենց արտադրության ընդլայնում արտադրանքի տեսակներով հիմնականում կապված լինելով դյուղակտն սպառողի հետ, նրանց հետաքրքրությունները սահմանափակ էին. իսկ առաջին հերթական ձեռնարկությունների թիվն այնքան չէր, որ կարողանար ընդգրկել քաղաքի արհեստավորական տմբողջ բազմությունը: «Միջին դասերը՝ մանր արդյունաբերողը, մանր առևտրականը, ուրհեստավորն ու դյուղացին—գրանք բոլորն էլ բուրժուազիայի դեմ կռվում են նրա համար, որպեսզի կործանումից փրկեն իրենց գոյությունը որպես միջին դասերի: Նրանք, հետևաբար, ոչ թե ուղղացիոն են, այլ կոնսերվատիվ: Դեռ սովիին. նրանք ունակ-ցիոն են, նրանք ձգտում են ետ դարձնել պատմության սահմանը: Եթե նրանք ուղղացիոն են, տալա այն չափով, ինչ չափով նրանց սպասում է անցումը պրոլետարիատի շարքերը. ինչ չափով նրանք պաշտպանում են ոչ թե իրենց ներկա, այլ իրենց ապագա շահերը, ինչ չափով նրանք թողնում են իրենց սեփական անսակեալը, որպեսզի կանգնեն պրոլետարիատի տեսակետի վրա»⁷², Արհեստավորների գգալի մասը դեռ համախմբված էր համբարա-

⁷¹ Տե՛ս Կ. Կոզմովսի, Լենինական, էջ 22—35, Գ. Ռ. Կուրբալան, Ալեքսանդրապոլի բոլշևիկյան կազմակերպությունը 1917—1920 թթ., Հայպետհրատ, 1953, «Լենինական 40 տարի», Երևան, 1964 և ուրիշն:

⁷² Կ. Մարգարև և Ն. Էնգելս, Կոմունիստական պարտիայի մանիֆեստը, Հայպետհրատ, 1952 թ., էջ 49:

կան կազմակերպությունների մեջ, Համբարում-
թյունների մինչև 1920 թվականները պահպանվե-
լու մասին են խոսում վարպետների տվյալներն
այս շրջանում կատարված աշխատանքների մասին:
Մ. Խամբարյանի հիշողություններից երևում է, որ
նրանք 1908 թ. մասնակցել են Թիֆլիսի ներսիսյան
պարտի բարի աշխատանքներին, 1909 թ. էջմի-
ածնի նոր վեհարանի կառուցման աշխատանքնե-
րին, 1910 թ. Կարսի մոտ աշխատակիս ունեցել են
ուստտրաշի, իսկ 1914 թ. ուստտրաշի է եղել
տնձամբ ինքրու Օրինակ, նույն բանն է վկայում
նաև Ս. Չոլախյանը 1916—17 թթ. մասին և այլն⁷³։
Սակայն 1919—21 թթ. թուրքական զավթիչների
երկու ներխուժումների ընդհանուր քայքայման
հետ դրվել լիովին քայքայման և հասցնում նաև
Համբարությունները։ Նաև արհեստավորներ ըսնի
տշխատունքի են բշվել դանսպան վարեր և նույն-
իսկ Թուրքիա։

Ջուրիյմի ուսպալումից և հեղափոխության
փերցնական հաղթանակից հետո վերջ տրվեց Ան-
դրկովկասի պաղութային շահագործմանը։ Հայաս-
տանում սովետական կարգերի հաստատումից հե-

տո, Միություն կառավարությունն ու կոմունիստա-
կան կուսակցությունը անցան Անդրկովկասյան նոր
հանրապետություններին օգնելու՝ պատերազմների
և համաճարակների ծանր հետևանքները վերացնե-
լու, կյանքը վերակառուցելու դործին։ Նախանշվե-
ցին առաջին սոցիալիստական կառույցները՝ էլեկ-
տրիֆիկացման, ոռոգման և այլ ասպարեղներում։
Սկսվեց խաղաղ շինարարությունը։ Այլը-Պոլի աշ-
խատավորությունը կանգնեց միանգամայն ապա-
հով և լուսավոր ուղու վրա։ Բանվորական լայն
մասսաների հետ մեկտեղ, արհեստավորական, ինչ-
ուես և հասարակության մյուս խավերը լիովին
ընդգրկվեցին սոցիալիստական վերակառուցման
դործում։

Սոցիալիստական շինարարության տարինե-
րին զավառական, արհեստավորական Ալեքսան-
դրապոլ լիովին կերպարանափոխվեց և դարձավ
Սովետական Հայաստանի արդյունաբերական և
մշակութային երկրորդ խոշոր կենտրոնը։ Հենիա-
կանի զարգացման զատմությունը հիմնական
ղծերով նման է Սովետական Միության բաղաբ-
ների զատմությանը։ Սակայն ինչպես զատմու-
թյան, առավել ևս ազգագրության առումով այն
ունեցել է որոշակի առանձնահատկություններ,
որոնց լուսարանման փորձն է արվում սույն աշ-
խատությանը։

⁷³ ՊԻԱ, գ. 103, Մ. Բամբարյանի նյութերը, տետր 3, 2ԱԻԱ, 1961—63 թթ. Հենիականում հեղինակի հավաքած նյութերը։